Արձանագրություն N 2

ՀՀՓԿ-ԳՀԱՇՁԲ-18/1 ծածկագրով գնանշման հարցման ընթացակարգով «ՀՀ փորձագիտական կենտրոն» ՊՈԱԿ-ի կարիքների համար Արշակունյանց 23 հասցեում տեղակայված «Փորձագիտական կենտրոն» ՊՈԱԿ-ի շենքի ձեղնահարկի կառուցման աշխատանքների ձեռքբերման գնահատող հանձնաժողովի նիստի

ք. Երևան

08 հունիսի 2018 թ.
ժամը 10:00

Մասնակցում էին գնահատող հանձնաժողովի նախագահ՝ Թ. Ղուկասյանը, անդամներ՝ Տ. Սանոսյանը, Զ. Թամազյանը, քարտուղար՝ Վ. Նավասարդյանը և հայտ ներկայացրած «Շինարար Գագիկ» ՍՊԸ-ի, «Ռադիկ Շին» ՍՊԸ-ի և «Բիդեք» ՍՊԸ-ի լիազոր ներկայացուցիչները:

Օրակարգ

ՀՀՓԿ-ԳՀԱՇՁԲ-18/1 ծածկագրով գնման ընթացակարգի հայտերի բացման մասին

ՀՀՓԿ-ԳՀԱՇՁԲ-18/1 ծածկագրով գնման ընթացակարգի գնահատող հանձնաժողովի նախագահ Թ. Ղուկասյանը նիստը հայտարարեց բացված և տեղեկացրեց, որ հրավերով սահմանված հայտերի ներկայացման վերջնաժամկետին՝

- հայտ են ներկայացրել ներքոհիշյալ մասնակիցները՝

Հ/Հ	Մասնակցի անվանումը և գտնվելու վայրը					Նախահաշվային գինը /ՀՀ դրամ/
	«Ռադիկ Շին» ՍՊԸ ՀՀ ք.Երևան, Հաղթանակ 14, 2 տուն	«ԱՐԳՈՀՇԻՆ» ՍՊԸ ՀՀ ք. Երևան, Վարդանանց 8	«Շինարար Գագիկ» ՍՊԸ ՀՀ ք. Երևան, Ֆրունզեի 12/34	«ԱՐՍԵՎ» ՍՊԸ ՀՀ ք. Երևան, Ավան Դուրյան 35 շ. 40 բն	«Բիդեք» ՍՊԸ ՀՀ ք. Երևան, Նեկրասովի 86	
	ԱԱՀ վճարող չի	ԱԱՀ վճարող	ԱԱՀ վճարող չի	ԱԱՀ վճարող	ԱԱՀ վճարող	
	Գնային առաջարկը /ՀՀ դրամ, առանց ԱԱՀ/					
1	23 100 000	23 600 000	22 950 000	21 200 000	23 326 542	36 000 000

Հանձնաժողովը ուսումնասիրեց և արձանագրեց, որ՝

- հայտեր պարունակող ծրարները կազմվել և ներկայացվել են հրավերի պահանջներին համապատասխան.
- հայտերում առկա են պահանջվող փաստաթղթերը, որոնք կազմված են հրավերով սահմանված պահանջներին համապատասխան.

Հանձնաժողովը քննարկեց և որոշեց հայտերի գնահատումն իրականացնել նույն նիստի ընթացքում: Իրականացված գնահատման արդյունքում հանձնաժողովը որոշեց՝

- **«ԱՐՍԵՎ» ՍՊԸ-ին՝**
  - ճանաչել որպես 1-ին տեղ զբաղեցրած մասնակից 1-ին չափաբաժնի մասով:
- **«Շինարար Գագիկ» ՍՊԸ-ին՝**
  - ճանաչել որպես 2-րդ տեղ զբաղեցրած մասնակից 1-ին չափաբաժնի մասով:
- **«Ռադիկ Շին» ՍՊԸ-ին՝**
  - ճանաչել որպես 3-րդ տեղ զբաղեցրած մասնակից 1-ին չափաբաժնի մասով:

Սահմանված կարգով էլեկտրոնային եղանակով հարցում կատարել Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտե առաջին տեղ զբաղեցրած մասնակցի՝ հայտը ներկայացնելու օրվա դրությամբ հարկային մարմնի

կողմից վերահսկվող եկամուտների գծով ժամկետանց պարտավորությունների առկայության վերաբերյալ, ներկայացնելով հարկ վճարողի հաշվառման համարը:

Հանձնաժողովը որոշեց 1-ին տեղ զբաղեցրած մասնակցին ծանուցել և առաջարկել 3 (երեք) աշխատանքային օրվա ընթացքում «ՀՀ փորձագիտական կենտրոն» ՊՈԱԿ-ին ներկայացնել ՀՀՓԿ-ԳՀԱՇՁԲ-18/1 ծածկագրով գնման հրավերի 2-րդ մասի հայտ պատրաստելու հրահանգի 3-րդ բաժնով նախատեսված փաստաթղթերը:

Հանձնաժողովի հաջորդ նիստը հրավիրել ոչ ուշ քան վերոհիշյալ փաստաթղթերը հանձնաժողովի անդամներին տրամադրվելուն հաջորդող 3-րդ աշխատանքային օրը, ժամը 10:30-ին, ՀՀ ք.Երևան, Արշակունյաց 23 շենք հասցեում:

Ընդունվել է որոշում՝ կողմ 3, դեմ 0:

Գնահատող հանձնաժողովի

նախագահ _____ Թ. Ղուկասյան

անդամներ _____ Տ. Սանոսյան

_____ Զ. Թամազյան

քարտուղար _____ Վ. Նավասարդյան